ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոսից հետո Ա դարում բավականին լարված հասարակական-քաղաքական դրություն էր տիրում Պաղեստինում: Այն հանգամանքը, որ 400 տարի շարունակ ոչ մի մարգարեական ձայն չէր հնչել հրեաների միջավայրում[1], առիթ էր տվել ենթադրությունների, որ Զաքարիայից, Անգեից եւ Մաղաքիայից հետո մարգարեությունները դադարել են: Քիչ ավելի ուշ շրջանում սա պիտի հաստատեր նաեւ Թալմուդը: Սույն կարծիքի համար հիմք էին ծառայում հատկապես սուրբգրային մի շարք հատվածներ (Ա Մկ Թ 27, Սղ ՀԳ 9, Ամս Ը 11, Օս Բ 9, Եզկ Է 26), որոնք ակնարկում էին երկրի անկման եւ մարգարեների անհետացման մասին[2]: Այնուամենայնիվ, որոշ փաստեր խոսում են այն մասին, որ նման մտայնությունը համատարած չէր: Ճիշտ է, Ք.ա. Բ դարում հրեաներն իրենց մարգարեական սպասումների մասին խոսում էին այնպես, որ տպավորություն է ստեղծվում, թե ակնկալվող մարգարեին այնքան էլ շուտ չէին սպասում (հմմտ. Ա Մկ Դ 46, ԺԴ 41), այնուամենայնիվ, Բ Օր ԺԸ 18-ի «մարգարէ»-ի սպասումը, այս կամ այն կերպ[3], կար: Т. Райт-ը, խոսելով մարգարեությունների վերացման կարծիքի մասին, գրում է. «Այստեղ պատկերն այսպիսին է. մարգարեություն դեռեւս չկա, սակայն երբ այն հայտնվի, իսրայելական կյանքի բոլոր կարեւոր տարրերը կվերադասավորվեն»[4]: Այդ էր վկայում նաեւ Եսայի մարգարեն, երբ ասում էր. «Զա՛յն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, եւ ուղի՛ղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ: Ամենայն ձորք լցցին, եւ ամենայն լերինք եւ բլուրք խոնարհեսցին. եւ եղիցին ամենայն դժուարինք 'ի դիւրինս, եւ առապարքն 'ի դաշտս: Եւ երեւեսցին փառքն Տեառն. եւ

1 **William Barclay**. The Gospel of Matthew, In 2 vol., vol. 1, Edinburgh, 1975, p. 43 (այսուհետեւ՝ **William Barclay**. The Gospel of Matthew 1).

2 Иисус и Евангелия, "Словарь под редакцией Джоэля Грина, Скота Макнайта, Говарда Мармалла", Москва, 2003, стр. 266 (այսուհետեւ՝ "Иисус и Евангелия").

3 Ա դարում Պաղեստինում հասարակության իրադրությունը հղի էր հեղափոխություններով: Մոտեցել էր Դանիելի մարգարեության յոթանասուն յոթնյակների (Դն Թ 24) ժամանակը, եւ Մեսիայի մուրալուր հայտնության համոզմունքը տիրել էր բոլորին: Ժամանակ առ ժամանակ ասպարեզում հայտնվում էին ինչ-որ առաջնորդներ, ովքեր հաճախ իրենց մեսիա էին անվանում եւ կարողանում էին համոզել մարդկանց, որ Աստված կկանգնի նրանց կողքին, ովքեր կհետեւեն իրենց եւ ժողովելով Իր ժողովրդին՝ կազատի նրան գերությունից, հռոմեական լծից ու կների մեղքերը: Այս շարժումները երբեմն այնքան էին հասնում ծայրահեղության, որ անխուսափելի էր դառնում պեպական մարմինների ու հռոմեական լեգեոնների միջամտությունը (**Н.Т. Райт**, Иисус и победа Бога, Москва, 1999, стр. 136-137 (այսուհետեւ՝ **Райт**): Հուզումների հիմնական պատճառը հրեաների երկարամյա սպասումներն էին: Հիմնականում նրանք սպասում էին Դավիթ թագավորի զարմից նրա նման մի կերպարի, որ պիտի ուղարկվեր Աստծուց եւ գրավելով Ավերյաց երկիրը՝ բնակվեր այնտեղ Աստծո ժողովրդի հետ: Ընդհանուր առմամբ սպասվող այս մարգարեն պիտի հանդես գար երկակի՝ որպես թագավոր եւ որպես հոգեւոր առաջնորդ: Ոմանք սպասում էին վախճանաբանական (eschatological) մարգարեի, ինչպիսին, ասենք, Մովսեսն էր, ոմանք էլ (ի մասնավորի ասդուկեցիները) ընդհանրապես սպասումներ չունեին (տե՛ս "Иисус и Евангелия", էջ 265): Հրեական միջավայրում սպասվող մարգարեն հիմնականում նույնանում էր Մեսիայի հետ (Մեսիական սպասման մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Լ. Գայանան**, Նոր Կտակարանի Ընդհանուր Ներածություն, Երեւան, 2003, էջ 105-110 (այսուհետեւ՝ **Գայանան**): **William Barclay**. "The Gospel of John", In 2 vol., vol. 1, Edinburgh, 1975, p. 77-78 (այսուհետեւ՝ **William Barclay.** The Gospel of John 1).

4 **Райт**, стр. 137.

տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ, զի Տէր խօսեցաւ» (Ես. Խ 3-5)[5]: Ահա ա՛յս, ինչպես նաեւ Մաղաքիայի մարգարեությունից վերցված. «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, եւ տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ» (Մղ. Գ 1) տողերի համադրությունով է սկսում Հովհաննես Մկրտչի մասին իր պատմությունը ավետարանիչներից ամենավաղը՝ Մարկոսը. «Որպէս եւ գրեա՛լ է ի մարգարէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քոյ, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քոյ: Ձայն բարբառոյ յանապատի. Պատրաստ՛սք արարէք զճանապարհ Տեառն, եւ ուղի՛ղս արարէք զշաւիղս նորա» (Մր. Ա 2-3)՝ վկայելով Աստծո գալստյան մերձավորությունը, ինչպես Հովհաննես Ավետարանիչն է գրում. «Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ. անուն նմա Յովհա՛ննէս: Սա՝ ե՛կն ի վկայութիւն զի վկայեսցէ՛ վասն Լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ո՛չ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն» (Յհ. Ա 6-8):Հովհաննեսի՝ ասպարեզ ելնելու մասին Ղուկաս Ավետարանիչը գրում է. «Ի հինգեւտասա՛ներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւորութեան Հրեաստանի Պիղատոսի՛ Պոնտացւոյ, եւ ի չորրորդպետութեան Գալիլեացւոց Հերովդի՛, եւ ի Փիլիպոսի եղբօր նորա չորրորդպետութեան ի Տուրացւոց եւ ի Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդպետութեան Լիսանեայ Աբիլենացւոյ. եւ ի քահանայապետութեան Անայի եւ Կայիափայ. եղեւ բա՛ն Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ՝ յանապատի անդ» (Ղկ Գ 1-2): Այս ժամանակ արդեն Հովհաննեսը ներկայանում է որպես հասուն, քարոզելու իրավունք ունեցող երեսնամյա[6] մարգարե: Ղուկասի համար Հովհաննեսի հայտնվելն այնքան մեծ կարեւորություն ունի, որ նա դրա ժամանակը փաստում է 6 կարեւոր հանգամանքներով[7]՝

ա. Տիբերիոս կայսեր իշխանության ԺԵ տարով,
բ. Պոնտացի Պիղատոսի կուսակալության[8] շրջանով,
գ. Հերովդես Անտիպասի չորրորդապետության շրջանով,
դ. Փիլիպպոսի չորրորդապետության շրջանով,
ե. Լյուսանիասի չորրորդապետության շրջանով,
զ. Աննայի եւ Կայիափայի քահանայապետության շրջանով:

---

5 Այստեղ եւ այսուհետեւ սուրբգրային մեջբերումները՝ ըստ «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկական բարբառ, Յաշխատասիրութենէ Տեառն Հ. Յովհաննու Զոհրապեան վարդապետի ի միաբանութենէ մեծին Մխիթարեան բարձունապետի եւ առաջին աբբայի», Վենետիկ, 1805 հրատարակության (այսուհետեւ՝ Զոհրապեան Աստուածաշունչ):

6 Հիշենք, որ Մկրտիչը 6 ամսով էր մեծ Հիսուսից, իսկ երբ Հովհաննեսն սկսեց իր գործունեությունը, Հիսուս 30 տարեկան էր (հմմտ. Ղկ. Գ 23):

7 **William Barclay**. The Gospel of Luke, Edinburg, 1975, p. 31 (այսուհետեւ՝ **Barclay**. The Gospel of Luke).

8 Հունարենում առկա "ἡγεμονίας" (տե՛ս "Новый Завет на Греческом и Русском языках", Российское библейское общество, Москва, 2002 (այսուհետեւ՝ "Новый Завет на Греческом")) բառի հիմքում ընկած "ἡγεμών" բառը, որ թարգմանաբար նշանակում է «կառավարիչ, կուսակալ» (տե՛ս **А. Д. Вейсман**. "Греческо-русский словарь", Москва, 1991, էջ 581 (այսուհետեւ՝ "Греческо-русский словарь")), Զոհրապեան Աստուածաշնչում թարգմանված է «դատաւոր», որը որոշ իմաստով համընկնում է կառավարչի՝ այն ժամանակվա իմաստին (հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբահօր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Ալգերեան», հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 602 (այսուհետեւ՝ ՆՀԲ, հ. 1)):

Բոլոր այս վեց հանգամանքների համեմատությունը հանգում է Ք.հ. 28-29թթ[9]: Այսպես՝ Տիբերիոսը, որ Օգոստոս կայսեր ժառանգորդն էր, աթոռակից կայսեր իշխանություն էր ստացել դեռևս Օգոստոսի կենդանության օրոք՝ Ք.հ. 14թ. (Հռոմի 765թ.): Ղուկասը հենց այդ թվականից է հաշվում «հինգերդասաներորդ ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր», որը եւ լինում է Ք.հ. 28 կամ 29 թվականը (Հռոմի 779-780թթ.)[10]: Հրեաստանի, Սամարիայի եւ Եդոմի կուսակալ Պոնտացի Պիղատոսը իր այդ պաշտոնին նշանակվել է Տիբերիոս կայսեր կողմից 25-26թթ. (Հռոմի 778թ.) եւ հեռացվել է պաշտոնից 36-37թթ. (Հռոմի 789թ.), ինչը դարձյալ ընդգրկում է վերոնշյալ 28-29թթ.[11]: Այնուհետեւ Ղուկասը նշում է 3 չորրորդապետների՝ Հերովդես Անտիպասին, Փիլիպպոսին, Լյուսանիասին: Հերովդես Մեծի որդիներից Հերովդես Անտիպասը, որ չորրորդապետն էր Գալիլիայի եւ Պերեայի (հետագայում չորրորդապետության իմաստն ընդլայնվեց եւ Հերովդեսին անգամ թագավոր էին անվանում (հմմտ. Մր. Ջ 14, 22)) կառավարել է Ք.ա. 4 - Ք.հ.39թթ. (Հռոմի 750-792թթ.), իսկ նրա եղբայր Հերովդես Փիլիպպոսը նույնպես կառավարել է Ք.ա. 4թ. (Հռոմի 750թ.) եւ կառավարումն ավարտել իր մահով Ք.հ. 33թ.-ին (Հռոմի 786թ.): Նրա իշխանության տիրույթն էր «Տուրացոց[12] եւ Տրաքոնացոց աշխարհը»[13]: Իսկ Լյուսանիասի կառավարման ժամանակաշրջանի մասին կցկտուր տվյալներից բացի ոչինչ հայտնի չէ[14]: Վերջին հանգրվանը, որ Ղուկասը կատարում է ժամանակաշրջանը ճշտելու համար, քահանայական՝ հոգեւոր իշխանության ներկայացուցիչների հովվապետության շրջանն է: Ղուկասը հիշատակում է Աննայի եւ Կայիափայի քահանայապետությունը: Ա դարում քահանայապետությունը դեռեւս ցմահ էր, եւ անհնար է, որ մեկից ավելի քահանայապետներ միաժամանակ պաշտոն զբաղեցնեին: Բանն այն է, որ թեեւ այս ժամանակաշրջանում քահանայապետը Կայիափան էր՝ փեսան Ք.հ. 6/7-15թթ. քահանայապետ եղած Աննայի (Հաննա, Անան), այնուամենայնիվ, նրա այս պաշտոնն անընդունելի չէր մեծամասնության կողմից: Պատճառն այն էր, որ Աննան բռնի

9 Այս թվականի կապակցությամբ որոշ աղբյուրներ 1 տարվա կամ քիչ ավելի շատ ժամանակի տարբերություն են նշում (տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 627 (այսուհետեւ՝ Քրիստոնյա Հայաստան): **Կրեյգ Քիներ**, Աստվածաշունչ՝ հենքի մեկնություն. Նոր Կտակարան, Հայ Ավետարանչական ընկերություն, Երեւան, 2004, էջ 218 (այսուհետեւ՝ **Քիներ**): Տե՛ս "Мифы народов мира". Энциклопедия, т. 1, Москва,1986, էջ 552 (այսուհետեւ՝ "Мифы народов мира 1"). "Мифологический словарь", Москва, 1991, էջ 250 (այսուհետեւ՝ Мифологический словарь). Новый библейский словарь, Библейские персонажи, Санкт-Петербург, 1999, էջ 156 (այսուհետեւ՝ Новый библейский словарь). **Մաղաքիա արք. Օրմանեան**, Համապատում, Մայր Աթոռ Սուրբ Էջմածին, 1997, էջ 59-60 (այսուհետեւ՝ Համապատում): NIV Bible, էջ 1509-ի տողատակ), ինչը, կարծում ենք, շատ ավելի տրամաբանական է, քանի որ Հովհաննեսի ծնունդից (Ք.ա. 5-4թթ.) 30 տարի հաշվելով՝ ստանում ենք Ք.հ. 25-26 թվականները:

10 "The Oxford Bible Commentary", Oxford, 2007, էջ 930 (այսուհետեւ՝ "The Oxford Bible Commentary"). New Bible Commentary, Inter-Varsity Press, Leicester, England, 2005, էջ 986 (այսուհետեւ՝ New Bible Commentary). Толковая Библия, или комментарии на все книги Св. Писания Ветхого и Нового Завета, Новий Завет. т. 1, Москва, 2007, էջ 793 (այսուհետեւ՝ Толковая Библия).. **Barclay**. The Gospel of Luke, էջ 31. **Архиепископ Аверкий**. Четвероевангелие, Москва, 1999, էջ 70 (այսուհետեւ՝ "Четвероевангелие"):

11 "The Oxford Bible Commentary", էջ 939, "New Bible Commentary", էջ 986. **Barclay**. The Gospel of Luke, էջ 31. "Толковая Библия", էջ 793, 570. **Գայսեան**, էջ 96: **Քիներ**, էջ 218:

12 Բացի Զոհրապեան Աստուածաշնչում առկա «**ի Տուրացոց**... աշխարհին» (ընդգծումը մերն է *Ա.Ս.*) անվանման, մնացած բոլոր աղբյուրները կարաածաշրջանն անվանում են «Իտուրացիների աշխարհ»: Հավանաբար, շփոթություն է առաջացել «ի» նախդրի առկայության արդյունքում:

13 Толковая Библия, էջ 793, **Barclay**. The Gospel of Luke, էջ 31:

14 Նույնը:

հեռացվել էր պաշտոնից[15], սակայն հրեաները նրան էին համարում ճշմարիտ կրոնապետ, քանի դեռ նա չէր մահացել: Ուստի Աննան ղեկավարում էր հոգեւոր գործերը փեսայի՝ Կայիափայի միջոցով[16]: Իսկ Կայիափայի քահանայապետության շրջանը 18-36/37թթ. է[17]: Հենց այս ժամանակ էր, որ «եղեւ բա՛ն Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ՝ յանապատի անդ» (Ղկ Գ 2), ինչպես հինկտակարանյան մի շարք մարգարեների (տե՛ս Եր. Ա 2, Եզ. Ա 3, Օս. Ա 1, Յվ. Ա 1), եւ Հովհաննեսը երկարամյա[18] ճգնությունից հետո դուրս եկավ անապատից ու հայտնվեց Մեսիային սպասող հասարակության շրջանում: Վայրը, ուր եկավ Հովհաննեսը, նշում են բոլոր ավետարանիչները: Ընդհանուր համադրությամբ այն կարելի է անվանել այսպես՝ Հրեաստանի անապատ (Մտ. Գ 1, Մր. Ա 4), որ գտնվում էր Հորդանանի մյուս կողմում (Ղկ. Գ 3)՝ Բեթաբրայում (Բեթաբրիա, Բեթաբարա) (Յհ. Ա 28): Հրեաստանի անապատն իրականում անապատ չէր բառի բուն իմաստով, այսինքն՝ զուրկ բուսական եւ կենդանական աշխարհից, այլ մի վայր էր, որ քիչ էր բնակեցված մարդկանցով: Այս անապատն իր տարածքով ամենամեծն էր Պաղեստինում եւ եզերվում էր հյուսիսում Երիքովի անապատով, արեւելքում՝ Մեռյալ ծովով, արեւմուտքում՝ Հուդայի լեռներով, իսկ հարավում՝ մի քանի փոքր անապատներով: Ինքը՝ Հրեաստանի անապատը, իր հերթին բաժանվում էր ավելի մանր անապատների, սակայն դրանք ոչ մեկն էլ Հորդանանին մոտ չեն ընկնում: Ամենայն հավանականությամբ տեղանքը «Հրեական անապատ» անվանված է լայն իմաստով, իսկ իրականում քարոզության վայրը եղել է Երիքովի անապատը[19]: Հովհաննես Ավետարանիչը «յայն կոյս Յորդանանու»-ն նույնացնում է Բեթաբրայի հետ, որը որոշ աղբյուրներում Բեթանիա է թարգմանված[20], քանի որ Բեթանիան նույնպես Հրեաստանի անապատին մոտ է գտնվում: Որոշ հետազոտողներ այդ երկու տեղանքներն անգամ նույնացնում են[21]՝ չմոռանալով սակայն նշել, որ այն մեզ քաջ հայտնի Բեթանիան (որ թարգմանվում է «աղքատների տուն») չէ[22]: Բեթաբրայի մասին տեղեկությունները սակավ են: Մ. արք. Օրմանյանը դրա տեղանքի մասին գրում է. «...Հորդանանի՝ Մեռյալ ծով թափվելու տեղից բավականին հեռու՝ արեւելյան եզերքին է գտնվում Բեթաբրա կամ Բեթաբարա գյուղը, որտեղ Հորդանանը մեկ այլ հուն է կազմում»[23]: Այլ ուսումնասիրողներ դրա տեղանքը նշում են Երիքովից դեպի հարավ[24] մեկուկես եւ Մեռյալ ծովից երկու ժամվա ճանապարհ[25]: Ոմանք այն նույնացնում

15 Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Иосиф Флавий**. Иудейские Древности, в 2-х томах. Москва, 1996, т. 2, гл. 14-17, էջ 215-216 (այսուհետեւ՝ "Иудейские Древности"):

16 "Толковая Библия", էջ 794, **Barclay**. The Gospel of Luke, էջ 31, **Քիներ**, էջ 218: **Евсевий Памфил**, Церковная история, Санкт-Петербург, 2007, էջ 38 (այսուհետեւ՝ "Церковная история").

17 "New Bible Commentary", էջ 986, "The Oxford Bible Commentary", էջ 930:

18 Ըստ The Navarre Bible, Saint Mark's Gospel, Second edition, 1989, էջ 68 (այսուհետեւ՝ "The Navarre Bible") աղբյուրի՝ Հովհաննեսը անապատում անցկացրել էր 5 տարի, սրա հիմքն անհասկանալի է եւ անընդունելի մեզ համար:

19 "Толковая Библия", էջ 64, "Четвероевангелие", էջ 70:

20 Տե՛ս "NIV Bible", "Новый Завет на Греческом":

21 Տե՛ս **Давид Штраус**. *Жизнь Иисуса*, **Эрнест Ренан**. *Жизнь Иисуса*, Харьков, Москва, 2000, էջ 802 (այսուհետեւ՝ "Жизнь Иисуса"). **Д. Мережковский**, Иисус неизвестный, Харьков, Москва, 2000, էջ 170 (այսուհետեւ՝ "Иисус неизвестный"). **Ալեքսանդր Մեն**, Մարդու Որդին, Երեւան, 2007, էջ 401 (այսուհետեւ՝ «Մարդու Որդին»):

22 «Մարդու Որդին», էջ 401:

23 Տե՛ս «Համապատում», էջ 59:

24 **Warner Keller**, The Bible as History, New York, 1956, էջ 363 (այսուհետեւ՝ "The Bible as History").

25 "Иисус неизвестный", էջ 170.

են Հորդանանից 10 կմ հեռու գտնվող Բոտանիմի հետ, որը հիշատակված է նաեւ Հեսուի գրքում (ԺԳ 26)[26], կամ նույնացնում են Դատավորաց գրքում հիշատակված Բեթփարայի հետ, որի մասին ասվում էր, թե Հորդանանին մոտ էր (Դտ. Է 24)[27]: Վարկածների առատությամբ հանդերձ՝ անկասկած է այն, որ Հովհաննեսն իր գործունեությունը (հատկապես մկրտությունը) ծավալում էր Հորդանանի ափամերձ անապատային շրջաններում[28]:

Հայտնվելով Հրեաստանի անապատում՝ Հովհաննեսը հանդես է գալիս ցնցող քարոզչությամբ. այս քարոզը, նրա՝ մինչ այդ ունեցած կենցաղն ու ասկետիկ կերպարը («Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ի սրեւո՛յ ուղտու, եւ գօտի՛ մաշկեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր նորա էր մարա՛խ եւ մե՛ղր վայրենի» (Մտ. Գ 4, Մր. Ա 6)), նրա հրաշալի ծնունդյան մասին դեռեւս ապրող հիշողությունները մեծաթիվ մարդկանց (այդ թվում եւ հրեա կրոնական ներկայացուցիչների) մղեցին շարժվել դեպի Հորդանան[29] (Մտ. Գ 5, Մր. Ա 5, Յհ. Ա 24): Սրա մասին ակնարկում են նաեւ Էբիոնիտների ավետարանը եւ Հովսեփոս Փլաբիոսը իր «Հրեական հնախոսություններ» աշխատության մեջ[30]:

Ընդհանուր առմամբ Մկրտչի քարոզչությունը կարելի է ամփոփել 3 բովանդակյալ անունների տակ՝

ա. Կոչ ապաշխարության,
բ. Կոչ մկրտության,
գ. Վկայություն իրենից հետո Եկողի մասին:

Թեեւ այս 3 կետերն այստեղ առանձին ենք նշում, սակայն դրանք ավետարաններում հանդես են գալիս միախառնված, եւ հաճախ զատորոշելը բավական դժվարություն է առաջացնում, այնուամենայնիվ, հստակ է, որ նորահայտ մարգարեն աստիճանաբար բացահայտում է իր գալստյան նպատակը՝ ապաշխարության մղել մեղավոր ժողովրդին մկրտության խորհրդանշական արարողությամբ եւ որպես միջնորդ՝ պատրաստել Իսրայելին Մեսիայի գալստյանը: Վերոնշյալ երեք հանգամանքները, որքան էլ զարմանալի է, ներկայացնում է նաեւ ազգությամբ հրեա Հովսեփոս պատմիչը «Հրեական հնախոսություններ»-ի 18/5:2 հատվածում:

Այսպիսով, Մատթեոս Ավետարանիչը գրում է. «Յաւուրսն յայնոսիկ գա՛յ Յովհաննէս մկրտիչ՝ քարոզել յանապատին Հրէաստանի, եւ ասել. Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից» (Մտ. Գ 1-2): Ապաշխարության միեւնույն կոչով որոշ ժամանակ անց, երբ Հովհաննեսն այլեւս ասպարեզում չէր, պիտի հանդես գար նաեւ Հիսուսը: Սրանից հետեւում

26 "Толковая Библия", էջ 1001.
27 «Մարդու Որդին», էջ 401:
28 "Иисус и Евангелия", էջ 267.
29 Հմմտ. **Արամ Դիլանյան**, «Տերունական տոներ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006, էջ 57 (այսուհետեւ՝ «Տերունական տոներ»):
30 "Апокрифы древних христиан (Иследование, тексты, комментарии)", Москва, 1989, էջ 66 (այսուհետեւ՝ "Апокрифы древних христиан"), "Иудейские Древности", т. 2 18/ 5:2, էջ 223, հմմտ. **Մկրտիչ վրդ. Ագերեան**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հատոր ապայից, Վենետիկ, 1810, էջ 34 (այսուհետեւ՝ **Ագերեան**, Ա): «Մարդու Որդին», էջ 320:

է, որ «ապաշխարութիւն» կոչվող քայլն էական եւ փրկող նշանակություն պիտի ունենար, բայց արդյոք հասկանո՞ւմ էին դրա իմաստն ու բովանդակությունը նրանք, ում ուղղված էր քարոզը: Թեեւ Մկրտիչն ու Հիսուս օգտագործում են «ապաշխարեցէ՛ք» կոչը, սակայն նրանք չեն բացատրում, թե ի՞նչ է այն: Սրանից կարելի է եզրակացնել, որ հրեաների շրջանում ապաշխարության հայտնի ինչ-որ ձեւ գոյություն ուներ:

Արդարեւ, ապաշխարությունը հուդայական վարդապետության մեջ կենտրոնական տեղ էր զբաղեցնում: Հրեա ռաբբիները ուսուցանում էին, որ Օրենքն ստեղծվել է արարչագործությունից 2000 տարի առաջ, մինչդեռ ապաշխարությունը՝ Օրենքից էլ առաջ՝ դրախտի, դժոխքի, Աստծո փառաց գահի, երկնային տաճարի եւ Մեսիայի անվան հետ միաժամանակ: Աստծո մոտ տանող միակ դուռը ապաշխարության դուռն է, որով մեղավորը հրաժարվում է իր մեղքից, վանում է այն իր մտքից եւ վերջնական որոշում է կայացնում այլեւս դրան չդառնալ (հմմտ. Եզ. ԼԳ 11, Եր. ԼԱ 18, Օս. ԺԴ 2-3)[31]: Ռաբբիներից ոմանք ասում էին, որ եթե Իսրայելը գոնե մեկ օր լիովին ապաշխարի եւ զղջա, Մեսիան անպատճառ կգա, մի բան, որը կարելի է ասել ազդարարում էին Մկրտիչը[32] եւ Հիսուսը՝ ասելով. «մերձեալ է արքայութիւն երկնից», որից հրեաները պիտի հասկանային, որ շուտով կհաստատվի մի արքայություն, որտեղ պիտի թագավորի սպասված մեսիան[33] (իհարկե մեսիայի եւ նրա թագավորության մասին հրեական պատկերացումներն արմատապես տարբերվում էին մեր այժմյան պատկերացումներից, որոնք, ըստ երեւույթին հենց նկատի ունեին Հովհաննես Մկրտիչը եւ Հիսուսը): Ջ. Ֆ. Մուրը գրում է. «Ապաշխարության նախնական նշանակությունը հուդայականության մեջ միշտ առնչվում է մարդու՝ Աստծո հետ հարաբերության փոփոխությանը, կյանքում՝ կրոնական եւ բարոյական վարքի փոփոխությանը»[34]: Նույնը նկատում է Հովսեփոս Փլաբիոսը՝ ներկայացնելով Մկրտչի քարոզչության ապաշխարողական հատվածը. «հրամայէր հրէից յառաքինութիւն նկատիլ, եւ առ միմեանս արդարութեամբ եւ առ Աստուած բարեպաշտութեամբ վարեալս»[35]:

Դիմելով հավաքված ժողովրդին (ըստ Մատթեոսի՝ սադուկեցիներին եւ փարիսեցիներին)՝ Մկրտիչն աղաղակում է. «Ծնո՛ւցէք իժից՝ ո՞ ցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն որ գալոցն է: Արարէ՛ք այսուհետեւ պտուղ արժանի՛ ապաշխարութեան. եւ մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք հայր զԱբրահամ. ասե՛մ ձեզ, զի կարո՛ղ է Աստուած 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու» (Մտ. Գ 7-9, Ղկ. Գ 7-8): Հավաքվածներին եւ հատկապես հրեա բարձրաշխարհիկ դասին «ծնունդք իժից» անվանելով՝ Մկրտիչը հավանաբար փորձում է շեշտել նրանց կեղծավոր, նենգ եւ ձեւապաշտ բնույթը, եւ աչքի առջեւ ունենալով անապատում բռնկվող տափասպանային հրդեհները՝ պատկերում է տեսարան, որի ժամանակ կրակի հեղեղը լափում է չորացած խոտերն ու տերեւները, թփերն ու մացառները՝ սրիպելով դրանց մեջ բնակվող օձերին, մկներին եւ այլ մանր կենդանիներին փախչել վտանգից ու փրկել կյանքը[36]: Փաստորեն Հովհաննեսը հակված էր այն մտքին, թե փարի-

31 **Barclay.** The Gospel of Matthew 1, p. 52-53.
32 Անդ, էջ 58:
33 Տե՛ս "Толковая Библия", էջ 64:
34 **Barclay.** The Gospel of Matthew 1, p. 53:
35 **Ագերեան** Ա., էջ 34, հմմտ. "Иудейские Древности", т. 2, стр. 223, «Մարդու Որդին», էջ 320:
36 **Barclay.** The Gospel of Matthew 1, p. 46:

սեցիներն ու սադուկեցիները, իրենց մեծամտությունից կամ այլ հանգամանքից դրդված, չեն արձագանքի ապաշխարության այս կոչին (ինչը որոշ դեպքերում ճիշտ էր (տե՛ս Ղկ. Է 30)), սակայն տեսնելով նրանց ցանկությունը՝ կարծես զարմանում է, որ նրանք որոշել են փրկվել վերահաս վտանգից այնպես, ինչպես իժերը՝ կրակից:

Այնուհետեւ Հովհաննեսը կոչ է անում ապաշխարության արժանի գործեր անել եւ չկարծել, թե զուտ հրեական ծագումն արդեն իսկ փրկություն է նշանակում: Բանն այն է, որ հրեաների կյանքում Աբրահամ նահապետը, ում նրանք «հայր» էին անվանում, բացառիկ տեղ էր գրավում: Ըստ հրեաների՝ Աբրահամի առաքինությունը եւ նրա հանդեպ Աստծո բարյացակամությունն այնքան մեծ էր (հմմտ. Ծն. ԺԵ 1), որ արժանիքները բավարար էին ոչ միայն իրեն՝ Աբրահամին, այլ նաեւ նրա սերունդներին: Հրեաներն ասում էին, որ հայրերի արժանիքների շնորհիվ բոլոր իսրայելացիները տեղ ունեն գալիք կյանքում: Անգամ այն հրեան, ով սխալմամբ դատապարտվել էր դժոխքի տանջանքների, հետ էր ուղարկվում դժոխքի դռների մոտ հսկող Աբրահամի կողմից[37]: Այս թյուր գաղափարը վերացնելու համար Մկրտիչը դիմում է հմուտ բառախաղի արամերեն "banaya"՝ որդիներ, եւ "abnaya"՝ քարեր, բառերի միջոցով[38]. մատնանշելով Հորդանանի ափին գտնվող քարերը՝ Մկրտիչն ասում է, որ Աստված դրանցից էլ կարող է «յարուցանել որդիս Աբրահամու», ուստիեւ պետք չէ քարերի պես մեռած, սառը, անհաղորդ եւ կենսազուրկ լինել[39], այլ կատարել ապաշխարության արժանի գործեր, հակառակ դեպքում Աստված իր դատաստանով չի հապաղի (Մտ. Գ 10, Ղկ. Գ 9): Քարոզչի կտրուկ եւ ահազդու խոսքերից ճնշված՝ ժողովուրդը հարցով է դիմում Հովհաննեսին. «Իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք» (Ղկ. Գ 10): Որքան էլ զարմանալի է, Հովհաննեսը հարցին չի պատասխանում իրեն՝ ճգնավորին, հատուկ մտայնությամբ, այլ նշում է, որ դատաստանից խուսափելու միջոցը անձնապես բարեկարգ եւ արդար կենսակերպն է. փրկությունը աշխարհից, կյանքից, աշխատանքից փախուստը չէ, այլ՝ աշխարհի կարգն ու դրվածքը բարեկարգելն ու զորավիգ լինելը նրանց, ովքեր կարիքն ունեն: Այսպիսով Հովհաննեսը հետեւում էր հին մարգարեներին՝ ընդգծելով Օրենքի էթիկական, բարոյական կողմի կարեւորությունը[40]: Ժողովրդի՝ «արդ՝ զի՞նչ գործեսցուք» հարցին Մկրտիչը պատասխանում է. «Ոյր իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ ոյր ոչ զուցէ. եւ ոյր կայցէ կերակուր՝ նո՛յնպէս արասցէ» (Ղկ Գ 11): Նման խոսքով հետագայում հանդես է գալիս նաեւ Հիսուսը (հմմտ. Մտ Ե 40)՝ ավելացնելով այդ քայլի նպատակը. «զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինսն է» (Մտ Ե 45): «Վա՛ղդապետ՝ զի՞նչ գործեսցուք» (Ղկ Գ 12) հարցով են մոտենում նաեւ մաքսավորները, մարդիկ, ովքեր իրենց աշխատանքային պարտականության չարաշահման պատճառով համարվում էին գող եւ քսակահատ, ինչի համար էլ ատելի էին հրեաներին[41]: Ի զարմանս մաքսավորների, որ կարծում էին, թե Մկրտիչը պիտի արգելք լինի իրենց աշխատանքին[42], Հովհաննեսը «ասէ ցնոսա. Մի՛ ինչ աւելի քան զհրամայեալսն ձեզ

37 Տե՛ս անդ, էջ 47:

38 Տե՛ս «Մարդու Որդին», էջ 57, "New Bible Commentary", էջ 986:

39 Տե՛ս "Толковая Библия", էջ 72:

40 Տե՛ս **Բ. Եղիայեան,** Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, Դ գիրք, Ներածութիւն Նոր Կտակարանի, Անթիլիաս-Լիբանան, 1974, էջ 923 (այսուհետեւ՝ **Եղիայեան**): Հմմտ. **Barclay.** The Gospel of Luke, էջ 34, «Մարդու Որդին», էջ 58:

41 Տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», Մոսկվա-Երեւան, 1992, էջ 350 (այսուհետեւ՝ «Բառարան Սուրբ Գրոց»):

42 Ազգությամբ հրեա մաքսավորները յուրայինների մեջ մերժելի էին եւ հեթանոսներին հավասար էին

առնիցէք» (Ղկ. Գ 13)՝ թույլ տալով շարունակել «մերժեալ» աշխատանքը, բայց դրանում լինել արդար ու ազնիվ: Միեւնույն հարցով մոտենում են նաեւ զինվորները: Զինվորներն էլ (հրեա, թե հռոմեացի) մաքսավորների պես սիրված չէին հասարակության կողմից. նրանք ավելի շատ օրենքի զանցառուներ էին, քան օրինապահներ. նրանք նեղում էին մարդկանց, բռնի ուժով խլում էին նրանցից իրենց ուզածը[43]: Զինվորներին նույնպես Հովհաննեսը պատվիրում է չափավոր լինել եւ օրինապահ. «Մի՛ զոք խուիցէք՝ եւ մի՛ զոք զրպարտիցէք, շա՛տ լիցին ձեզ թոշակքն ձեր» (Ղկ. Գ 14):

Հովհաննեսի՝ ապաշխարության եւ սիրալ ճանապարհից դառնալու կոչի մեկ ուրիշ դրվագ է ներկայացված Ղկ. Գ 19-ում, ուր խոսվում է Հերովդես Զորրորդապետի եւ Հերովդիադայի անառակության դատափետումն ու բարոյականության քարոզը, ինչը վկայում է Հովհաննեսի աներկյուղ բնավորության եւ Աստծուն անսպառ նվիրումի մասին:

Հետաքրքրական է, որ ի տարբերություն Մատթեոսի՝ Մարկոս եւ Ղուկաս ավետարանիչներն ապաշխարության քարոզը նշում են մկրտությունից անբաժան՝ այն անվանելով «մկրտութիւն ապաշխարութեան» եւ որպես այդ քայլի արդյունք, նշում են մեղքերի թողությունը (Մր Ա 4, Ղկ Գ 3): Թեեւ մկրտության եւ ապաշխարության կոչերի միջեւ հստակ կապ չի երեւում, այնուամենայնիվ պարզ է, որ մկրտությունը, այսպես ասած, տեսանելի նշանն էր ապաշխարության հանձնառության[44] եւ կենտրոնական, կապող դեր է խաղում Հովհաննեսի քարոզչության մեջ. դրա կարեւորությունն այնքան մեծ էր, որ Հովհաննեսն այդուհետ հորջորջվեց «Մկրտիչ» անվամբ:

Հովհաննեսի մկրտության նպատակի մասին դեռեւս Ա դարից մինչեւ օրս արտահայտվում են բազմաթիվ կարծիքներ. ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Հովսեփոս պատմիչը գրում է, որ Հովհաննեսը կոչ էր անում հավաքվել լվացումների համար եւ «մկրտութիւն ընդունելի Նմա (Աստծուն - *Ա.Մ.*) երեւիլ (ասէր) ո՛չ առ մեղաց ինչ քաւութիւն վարելով, այլ՝ առ մաքրութիւն մարմնոյն, ուր եւ հոգին արդարութեամբ իցէ նախասրբեալ»[45]: Փաստորեն հրեա պատմիչը, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով (հավանաբար եսենների լվացումների հետ շփոթելով[46]), հակասում է ավետարանական «ի թողութիւն մեղաց» նպատակին՝ ասելով, որ ոչ թե այդ է նպատակը, այլ՝ «մաքրութիւն մարմնոյն»: Այլ նպատակ է անուղղակիորեն ներկայացնում Էբիոնիտների ավետարանը. «...եկաւ Հովհաննեսը եւ Հորդանան գետում մկրտում էր մկրտությամբ, որ ապաշխարեն»[47]: Պարականոն այս գրվածքում առկա նպատակը կարծես համընկնում է որոշ օրթոդոքս հեղինակների կարծիքին: Վերջիններս ասում են, որ մկրտությունն արտաքին արտահայտությունն էր այն բանի, որ մկրտվողը ցանկանում է մաքրվել մեղքից, այնպես, ինչպես մարմինն է ջրով մաքրվում կեղտից[48]: Ոմանք Հովհաննեսի մկրտության մեջ տեսնում էին գալիք ինչ-որ մեծ շարժ-

---

համարվում. նրանց թույլ չէր տրվում տաճար կամ ժողովարան մտնել, մասնակցել հասարակաց աղոթքին կամ վկայություն տալ ատյանի առջեւ («Բառարան Սուրբ Գրոց», էջ 350):

43 Տե՛ս "Толковая Библия", էջ 796:

44 Տե՛ս **Джеймс Д. Данн**, Единство и многообразие в Новом Завете, Москва, 1997, էջ 192 (այսուհետեւ՝ **Данн**):

45 **Աղեքսան** Ա, էջ 34, հմմտ. "Иудейские Древности", т. 2, էջ 223, «Մարդու Որդին», էջ 320:

46 Տե՛ս "Новый библейский словарь", էջ 156:

47 Տե՛ս "Апокрифы древних христиан", էջ 66:

48 Տե՛ս «Մարդու Որդին», էջ 56, "Четвероевангелие", էջ 71:

ման պատրաստություն, որը, ամենայն հավանականությամբ ազգային[49] կամ հոգեւոր-կրոնական[50] ենթատեքստ պիտի ունենար: Հնարավոր է համարվում նաեւ այն, որ Հովհաննեսի մկրտությունը ենթադրում էր մկրտվող մարդու կարգավիճակի որոշակի փոփոխություն[51], ինչի արդյունքում մկրտվողը դառնում էր մի ինչ-որ նոր ուիտրի զավակ[52]: Իսկ ոմանք (հռոմեականաթոլիկ եկեղեցի) այն կարծիքին են, թե Հովհաննեսի մկրտությունը լոկ նախագծում էր այն մկրտությունը, որը այսօր կիրառում են քրիստոնյաները՝ ընդգրկելով ողորմածությունը եւ մեղքերից կամավոր հրաժարումը[53]:

Հովհաննես Ավետարանչից բացի, մյուս 3 ավետարանիչները նշում են, որ Հովհաննես Մկրտիչն իր մկրտությունը կատարում էր Հորդանան գետում (Մտ. Գ 6, Մր. Ա 5, Յհ. Ժ 40): Այդ վկայում է նաեւ Էբիոնիտների ավետարանը[54]: Հորդանան բառը թարգմանվում է «իջնող»: Այս գետը, որ ամենաերկարն է Պաղեստինում (մոտ 120 կմ) եւ մեծ մասով փռված է համանուն դաշտում, երկիրը բաժանում է երկու՝ արեւելյան եւ արեւմտյան մասերի: Գետը հնուց ի վեր հայտնի էր հրեաների պատմությանն ունեցած իր «մասնակցությամբ». Երիքովի մոտակայքում հենց Հորդանանն էին անցել Իսրայելացիները Հեսուի գլխավորությամբ եւ մտել Ավետյաց երկիր (Հս. Գ), Դավիթ արքան եւ նրա հետ ողջ ժողովուրդն էլ Աբեսողոմի ապստամբության ժամանակ «անցի՛ն ընդ Յորդանան» (Բ Թգ. ԺԷ 22), Հորդանանն անցան նաեւ Եղիան եւ Եղիսեն (Դ Թգ. Բ 6-8, 13-14), այս գետում Եղիսեի խորհրդով իր բուժումը գտավ Նեեման Ասորին (Դ Թգ. Ե 1-27), այն բազմիցս հիշատակել են մարգարեները (Սղ. ՃԺԳ 3, Ես. Թ 1, Եր. ԺԲ 5, ԽԹ. 19)[55], իսկ այժմ ա՛յս գետի ափին էին հավաքվել «ամենայն Երուսաղէմացիք՝ եւ ամենայն Հրէաստան՝ եւ ամենայն կողմն Յորդանանու, մկրտէին ի նմանէ (Հովհաննես Մկրտչից - *Ա.Ս.*) ի Յորդանան գետ, եւ խոստովա՛ն լինէին զմեղս իւրեանց» (Մտ. Գ 5-6)՝ հուսալով, որ կկրկնվի Իսրայելի փրկության պատմությունը, ինչպես Հեսուի օրոք (հմմտ. Հս. Գ)[56]:

Ջուրը՝ իբրեւ մաքրության խորհրդանիշ, հնուց ի վեր եղել է կրոնական արարողությունների բաղկացուցիչ մաս. դա բացատրվում է մարդկային բնության՝ բարոյական մաքրության ընդհանուր կրոնական պահանջով: Այն կիրառելի է եղել բաբելացիների, պարսիկների, հնդիկների, եգիպտացիների (Իսիսի պաշտամունք), հռոմեացիների ու հույների (Դեմետրայի պաշտամունք)[57], հայերի (Աստղիկի պաշտամունք) եւ հրեաների շրջանում, ուստի այն ժամանակ, երբ Հովհաննես Մկրտիչը սկսեց մկրտել, աշխարհում ջրի հետ կապված արարողությունների մի ողջ մշակույթ գոյություն ուներ, որից անմասն չէին նաեւ հրեաները:

Հրեաներն ունեին լվացման արարողություններ՝ կարգված Աստծուց Մովսես մարգա-

---

49 Տե՛ս **Եղիայեան**, էջ 923:

50 Տե՛ս "Всемирная Энциклопедия Христианство", Минск, 2004. էջ 271 (այսուհետեւ՝ "Христианство"):

51 Տե՛ս "Иисус и Евангелия", էջ 265:

52 Տե՛ս **Райт**, էջ 145:

53 "The Navarre Bible", էջ 68:

54 "Апокрифы древних христиан", էջ 66:

55 «Աստվածաշնչի հանրագիտարան», Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1999, էջ 266-267 (այսուհետեւ՝ «Աստվածաշնչի հանրագիտարան»), «Բառարան Սուրբ Գրոց», էջ 396-399, «Համապատում», էջ 64:

56 **Քիներ**, էջ 148:

57 «Քրիստոնյա Հայաստան», էջ 748, "Encyclopedia of early Christianity", 1998², էջ 160 (այսուհետեւ՝ "Encyclopedia of early Christianity»):

րեի շուրթերով (Ելք ԺԹ 10, Ղեւտ. ԺԱ-ԺԵ), որոնք, որպես կանոն, մաքրման արարողություններ էին կրոնական գործողության մասնակցելու պատրաստվողների եւ նրանց համար, ովքեր անմաքուր էին ճանաչվել: Լայն առումով հրեաների համար անմաքուր էր նաեւ ցանկացած այլադավան՝ հատկապես հեթանոսները, որ բավական շատ էին Պաղեստինում[58]: Լվացման արարողությունը մկրտության[59] բովանդակությամբ հրեաները կատարում էին նորադարձների վրա, որոնք անվանվում էին պրոզելիտներ[60]: Բուն արարողակարգը անվանվում էր tevilia[61]՝ լվացում[62]: Լվացման այս տեսակի հինկտակարանյան հիմքը գտնում ենք Եզեկիելի մարգարեության մեջ (ԼԶ 25). «Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց, եւ յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ», մեկ տարբերությամբ միայն, որ նորադարձների մկրտությունը կատարվում էր ամբողջական ընկղմամբ եւ ոչ թե ջուր սրսկելով: Տղամարդ նորադարձի համար, որպեսզի նա հրեականություն ընդունի, գոյություն ուներ 3 կարեւոր պայման՝ թլփատություն (ուխտի նշան), մկրտություն (անցյալ կյանքի մեղքերից մաքրվելու նշան), զոհաբերություն (մեղքերի քավության նշան): Կնոջ համար այդ պայմանները երկուսն էին՝ մկրտությունը եւ զոհաբերությունը: Մկրտությունը կատարվում էր կեսօրին եւ դրա ժամանակ պրոզելիտն ամբողջովին մտնում էր ջրի մեջ, որտեղ նրան էին փոխանցվում օրենքից որոշ հատվածներ: Մկրտվում էր պրոզելիտի ողջ ընտանիքը, այդ թվում եւ երեխաները[63]:

Ջրով արարողության մեկ այլ դրսեւորում հայտնի է նաեւ հրեական ավելի փոքր համայնքում՝ Քումրանում, որի հետ Մկրտիչի կապը, ինչպես արդեն ասվել է վիճարկվում է գիտնականների կողմից: Եսենների արարողակարգի 2 հատկանշական մասերն էին մկրտությունը եւ հասարակաց ճաշը[64]: Նրանք անմաքուր էին համարում անգամ հրեաներին, ովքեր չէին անցել եսենական համայնքային լվացումները[65]: Հովսեփոս Փլաբիոսը «Հրեական պատերազմ» աշխատության մեջ (2/8:5) նշում է՝ եսենները «հավաքվում են որոշակի տեղում, զուտեւորվում են քաթանե թաշկինակով եւ լվանում են իրենց մարմինները սառը ջրով»[66]: Այս լվացումները, ի տարբերություն հրեական անմաքրության լվացումների, խորհրդանշում էին մեղքերի քավություն, սրբություն եւ մուտք նոր Ուխտի մեջ: Դրանք կատարվում էին

58 Հեթանոսների մկրտության թույլատրության մասին մանրամասն տե՛ս "Иисус и Евангелия", էջ 266:

59 «Մկրտություն» բառը ՆՀԲ, հ. 2-ում բացատրված է որպես «մխումն ի ջուր, լուացումն ջրով: Երբեմն որպէս արտաքին լուացումն ըստ խստրանաց հրէից, կամ ջրացանութիւն» (էջ 285): Բառի հունարեն համարժեքն է "βάπτισμα", որ նույնպես թարգմանվում է «սուզում ջրի մեջ եւ լվացում» (տե՛ս "Греческо-русский словарь", էջ 243), հմմտ. "Иисус неизвестный", էջ 172, «Մարդու Որդին», էջ 57, "Толковая Библия", էջ 69, **И.Д. Амусин**, "Кумранская община", Москва, 1983, էջ 142 (այսուհետեւ՝ "Кумранская община"), "Мифы народов мира", էջ 552:

60 Հունարեն "προσήλυτος" բառից, որ թարգմանվում է «եկվոր, նորադարձ» ("Греческо-русский словарь", էջ 1076):

61 Եբրայեցերենում մկրտության կամ լվացման համարժեք բառն է טבילה (tevila), (տե՛ս "The complete Hebrew-English dictionary" by Reuben Alcalay, Ramat-Gan-Jerusalem, 1970, էջ 847 (այսուհետեւ՝ "Hebrew-English dictionary"):

62 Տե՛ս «Մարդու Որդին», էջ 57:

63 Տե՛ս **William Barclay**. The Gospel of Mark, Edinburg, 1977, էջ 14 (այսուհետեւ՝ **Barclay**, The Gospel of Mark). "Толковая Библия", էջ 68:

64 Տե՛ս **Բարգէն վրդ. Թօփճեան**, Եսենացիք, Մոնթրէալ, 1987, էջ 51 (այսուհետեւ՝ «Եսենացիք»):

65 Տե՛ս "Жизнь Иисуса", էջ 231:

66 **Иосиф Флавий**. Иудейская Война, Минск, 1999, 2/8:2, стр. 204 (այսուհետեւ՝ "Иудейская Война"):

յուրաքանչյուր տարի[67] եւ նրանք, ովքեր նոր պիտի մտնեին քումրանյան համայնք, պարտադիր կերպով ջրի մեջ սուզվելուց առաջ անցնում էին ապաշխարողական փորձության շրջան՝ հոգին մաքրելու համար (հիշենք, որ նման գաղափար արտահայտում էր նաեւ Հովսեփոս Փլաբիոսը)[68]: Ըստ Բ. վրդ. Թ-օփճեանի՝ Քումրանի ձեռագրերում վկայված է, «թե երբ թեկնածուն իր փորձաքննութեան առաջին տարին աւարտէր, ջուրով կը մկրտուէր ու ապա միայն կը սկսէր իր երկրորդ տարուան շրջանը: Սակայն նորընծայի պարագայէն անջատ հին աղանդաւորներն ալ ամէն տարի կը մկրտէին, քաւելու համար իրենց մեղքը ու նորոգելու իրենց ուխտը»[69]: Լվացումների համար օգտագործում էին խոշոր ջրամբարներ. դրանք պետք է որ բավական խորը լինեին, քանի որ Դամասկյան փաստաթղթում հրաման կար չլվացվել, եթե ջրամբարը կեղտոտ կամ ոչ խորը լիներ: Հնարավոր է, որ ծիսական լվացումներն ավելի շատ կատարվում էին փոքրիկ աղբյուրներում[70]:

Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ Հովհաննեսի կիրառած մկրտությունը բազում տեսանկյուններից չէր համընկնում ո՛չ հրեական, ո՛չ էլ եսենական մկրտության հետ: Հապացույց վերոգրյալի՝ ներկայացնենք տարբերության մի քանի նմուշներ.

ա. Նոր Կտակարանում չկա որեւէ հատված, որը կվկայի թե քրիստոնյաների մկրտությունը նմանվում է պրոզելիտների մկրտությանը: Ուրեմն, ենթադրելի է, որ եթե անգամ Հովհաննեսի մկրտությունն արտաքին ձեւի մեջ միանգամայն նորույթ չէր, այնուամենայնիվ, այն կապ չուներ հրեական արարողության հետ: Հովհաննեսի քարոզչությունն ինքնուրույն էր եւ անկախ օտար ազդեցություններից. այն ապտվածային հայտնություն էր, ուստիեւ մկրտությունն էլ բխում էր նման հանգամանքից[71] «Աստուծոյ վերահաս թագաւորութեան մասնակցիլ կարենալու համար պատրաստութեան եւ սրբագործութեան արարողութիւն մը»[72]:

բ. Ի տարբերություն պրոզելիտների, ովքեր ինքնուրույն էին կատարում լվացումները, Հովհաննեսի մկրտության ժամանակ ինքը Մկրտիչն էր յուրաքանչյուրին սուզում ջրի մեջ (հմմտ. Մտ Գ 11, Մր Ա 8, Ղկ Գ 16, Հի Ա 26)՝ տրավարարվելով ուղղակի մկրտության կոչով[73]:

գ. Հրեական լվացումները նախատեսված էին միայն հեթանոսների համար. հրեային կարող էր վիրավորել այն գաղափարը, որ ինքը պիտի դարձի գար, քանի որ յուրաքանչյուր հրեա իրեն արդեն իսկ ընդրյալ եւ փրկված էր համարում: Իսկ Հովհաննեսը, ինչպես տեսնում ենք, խտրություն չի դնում ո՛չ հրեայի եւ ո՛չ էլ հեթանոսի միջեւ, քանի որ յուրաքանչյո՛ւր չապաշխարողի մահ էր սպասվում[74]:

դ. Ի տարբերություն քումրանյան լվացում-մկրտությունների, Հովհաննեսի մկրտությունը միանգամյա էր եւ ողջ կյանքի համար[75]:

ե. Հովհաննեսի մկրտությունը ոչ մի կապ չէր ենթադրում ծիսական անմաքրության հետ. այն ավելի շուտ բարոյական անմաքրության վերացում էր քարոզում[76]:

---

67 «Եսսենացիք», էջ 52:
68 "Кумранская община", էջ 142, 144, 211:
69 «Եսսենացիք», էջ 51:
70 "Кумранская община", էջ 142, «Եսսենացիք», էջ 51:
71 "Толковая Библия", էջ 68, Иисус и Евангелия, էջ 266:
72 **Թ.**, Յովհաննէս Մկրտիչ, Սիոն, 1934, Ա, էջ 7:
73 "Толковая Библия", էջ 69, "Иисус и Евангелия", էջ 266-267, **Եղիայեան**, էջ 924:
74 **Քիներ**, էջ 147, "Иисус и Евангелия", էջ 267:
75 "Иисус и Евангелия", էջ 267, **Եղիայեան**, էջ 924, "Кумранская община", էջ 211, "Жизнь Иисуса", էջ 232:
76 "Иисус и Евангелия", էջ 267, **Եղիայեան**, էջ 923:

զ. Հովհաննեսը մկրտում էր բոլոր նրանց, ովքեր ցանկություն էին հայտնում, եւ Նոր Կտակարանում չենք գտնում որեւէ նմուշ, որ Հովհաննեսից մկրտվածները ապաշխարողական փորձության շրջան անցնեն. բավական էր միայն մկրտվողը խոստովաներ իր մեղքերը, դրանով արդեն իսկ ապաշխարած կլիներ[77]:

Ակնհայտ է, որ Հովհաննեսն էլ կարծես եսեսների նման հակադրվում էր ղեւտական լվացումներին՝ ջրին փոխելով խորհրդավոր, միստիկ իմաստ՝ մարմնի արտաքին մաքրումից տանելով ներքին մաքրման[78]՝ արդարության, ճշմարտության, սիրո արքայության մեջ ընդունվելու նախապատրաստության[79]: Մյուս կողմից հստակ է, որ Մկրտչի սկսած մկրտությունը նախապատրաստումն[80] էր ի վերուստ եկող ինչ-որ «նորության», ինչպես եւ հետագայում երեւում է Հիսուսի՝ հրեա առաջնորդների հետ ունեցած զրույցից (Մտ ԻԱ 23-27, Մր ԺԱ 27-33, Ղկ Ի 1-8): Իրավամբ, Մկրտչի քարոզչության՝ մինչ այս առաջ քաշված 2 հանգամանքները՝ ապաշխարությունը եւ մկրտությունը, նախապատրաստում էին ժողովրդին Քրիստոս-Մեսիայի մոտալուտ գալստյանը:

77 Անդ:

78 Жизнь Иисуса, стр. 231,232.

79 **Եղիայեան**, էջ 924:

80 **Զարեհ արք. Ազնաւորեան**, Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հաւատամքին, Հալէպ, 2008, էջ 384, **Դան**, էջ 192, "Иисус и Евангелия", էջ 267: